

Մ Ա Ն Ի Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Ա Ռ Ա Ծ Ք

ԿԱՏԱՐԵԱԼ Հանդատութիւն և աղատութիւն
փնտռողները՝ ոսկի շինողներուն կարգը պէտք է
դնել. աս աշխարհքիս համար չեն այն անուններ
ըր. շատ շատ գերեզմանատունը կը գանուի : —
Միայն աւելի համբերողն և առաքինին կրնան ա-
ւելի հանգիստ և ազատ ըլլալ : — Վախ մը ու խիղճ
մը չունեցողը՝ բաւական հանգիստ և ազատ է :

ԲՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Ինչո՞ր մոլութեան մը լոյսն որ կ'ըլենք՝ առջի
բերան լոյսը աչքերնիս կ'առնէ .

— Վասն զի բիրը մթութեան մէջ ընդարձա-
կած ըլլալով, երբոր լոյսն որ կ'ըլենք մէկէն չկըր-
նալով պզտիկնալ՝ շատ մը լուսաւոր ճառագայթ-
ներ կ'ընդունի. որով առջի բերան աչքերնիս կ'առ-
նու. . բայց երթալով բիւր կը պզտիկնայ և չափա-
ւոր լուսոյ ճառագայթ ընդունելով կը սկսինք ո-
րոշ տեսնել :

ՏՕՄԱՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Հայոց Թաւախ . Թուական կ'ըսուի մեծ գի-
պուածէ մը կամ հաստատեալ ժամանակէ մը սկը-
սած համրանք տարիներու . Ինչպէս Քրիստոսի
Թուական կամ Նոր Թուական կ'ըսուի Քրիստոսի
ծննդէնէն սկսեալ համրուած տարիներն , որ ընդ-
հանուր գրեթէ քրիստոնէից Թուականն է . քիչ
ազգ կայ որ առանձին Թուական ալ ունենայ . ա-
սոնցմէ մէկն է մեր ազգը , որուն Թուականին
սկիզբն է Քրիստոսի 552 տարին . պատճառն
այս է՝ որ նախընթաց տարին , այսինքն 551ին Բ
Մովսէս կաթողիկոսին ատեն ժողովքով մեր ազ-
գին տօմարն կարգաւորեցին . և այս մեծ գործ-
քին յիշատակ՝ սկսան յաջորդ տարիէն նոր Թուա-
կան մը բանեցընել , որովհետեւ Քրիստոսի Թուա-
կանը բանեցընելն ալ գեռ հասարակ չէր եղած :
Այն տարին նաւասարդի մէկը , (որ Հայոց առ-
ջի ամիսն և տարեգլուխն է) ընկաւ Յուլեան
տօմարին (Լատինաց և Յունաց) յուլիս ամսոյն
11ին . և որովհետեւ Հայք նահանջ չէին ընել ,
այսինքն չորս տարին հեղ մը օր մը չէին աւելցը-
նել , անկէ ամէն չորս տարի տարեգլուխը կը շար-
ժէր օր մը առաջ կ'անցնէր . այսինքն առջի տա-
րին որ յուլիսի 11 էր , չորրորդ տարին յուլիսի
10ին եկաւ , ու ընտրող տարին յուլիսի 9ին , ևն .
Իսկ այս տարի (1849) օգոստոսի 21ին (ըստ հին
տօմ .) կուգայ Հայոց ՌԻՄՂԹ տարեգլուխն , (որ
է 1299) տարին . (ըստ 1 առ . սեպտ . 2) Այս ան-
հաստատութիւնը եկեղեցական տօնից շփոթու-
թիւն կը բերէր . անոր համար հաստատեցին Հայք՝
եկեղեցական տարի մ'ալ , որ նահանջ ընելով
տարեգլուխն միշտ օգոստոսի 11ին կուգայ . ասի-
կայ է որ Յայսմաւուրաց տարի կ'ըսուի . և կ'երև-

նայ թէ հաստատուեցաւ Սարկաւագ Վարդապե-
տին ձեռք յամի 1084 , երբ որ ինքն նորէն կար-
գաւորեց տօմարն . և առջի գործածուած տարին
Քաղաքական ըսուեցաւ : Ահա այս Թուականն է
որ օրացոյցին ճակատը կը դրուի Հայոց Թուա-
կան ըսուելով Հայերէն գրերով (ՌԻՄՂԹ) . վասն
զի մեր Թուանշաններն ալ մեր գրերն են :

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ԵՐԿԻՐՍ հինգ մեծ մասն կը բաժնեն աշխարհա-
գիրք . որոնց իրեքը հին աշխարհք կ'ըսուին , և են
Ասիա , Եւրոպա և Ափրիկէ . Ասիա անունը կ'ե-
րևայ թէ առնուած է Աս կամ Ոս ըսուած հին
ազգէ մը , որոնց մնացորդքն են հիմակուան Ոս
կամ Ոսսեթ ըսուած Կովկասեան ազգը : Եւրոպա՝
ըստ առասպելաց Փիւնիկեցւոց Ագենոլը Թագա-
ւորին աջ ձիւն էր , որ Արամազդ բերաւ այս եր-
կիրս և անոր անուամբ ըսուեցաւ Եւրոպա . ոմանք
ալ Փիւնիկեցի Ուրուպիա բառէն կը կարծեն , որ
Ճերմակ ըսել է , իբր թէ Ճերմակ մարդկանց եր-
կիր : Ափրիկէ ըսելուն պատճառն յայտնի չէ , թե
րես ան ալ Փոփուգացւոց անուամբ կոչուեր է . հի-
ները աւելի Լիբիա կ'ըսէին քան Ափրիկէ . Լիբիա
անունը Պոսիդոն չաստուածոյն աջ ձիւնէն առ-
նուած է կ'ըսեն Յոյնք : Իսկ նոր աշխարհքին մա-
սերն են Ամերիկա և Ովկիանիա . Ամերիկա ըսուե-
ցաւ՝ Ամերիկոս Վեսպուչչի աշխարհագրին ա-
նուամբ , որ նախ գրով տեղեկութիւն տուաւ աս
աշխարհին վրայօք անձամբ պտրտելով : Ովկիանիա
կ'ըսուի Ովկիանոս ծովուն մէջ ըլլալով աս հինգ-
երորդ մասն , որ է բազմութիւն կղզիներու , որոնց
գլխաւորն է նոր Հոլանտա , անոր համար աս ետ-
քինիս անունով ալ կը կոչուի Ովկիանիան :

ԱՐՁԱՆԱԳԻՐ Ի ՀԱՅԿ

ՀԱՅԿԱՅ նշխարք . փառքն իւր 'ի Հայս , համ-
բաւն յազնես , ինքն յաստուածս :

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Ի կարուակէ հանճարեղին
Կարեալ կապայ զանմաշէլին ,
Զնիւթն 'ի քարանց կակղացուցին ,
Ասեղըն՝ սալն էր գարբընին :

ՓԵՏՐՈՒԱՐԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ՍՈՒՆԿ .
(Մանթաբ)